

Է Ծ Ն Ե Ձ Ե Գ

Հետևեալ տղերք դարձեալ մեր Թ. 231 Ձեռագրեկ ստեղծած են. Ձեռագրիս 459րդ թուղթին առաջին երեսին վրայ կայ կարմրասառ սա խոռագիրը. «Տաղեր յարութեան սրբոյ Զատիկի, զկնի եղաբերիցն Աւետ. Մատթոսի»:

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ԵՐԳ

Այսօր լոյս ծագեաց յաւուրս առաջին,
Արեգակն արդար փայլեաց յարարածս,
եւ լուսաւորեաց որք ի խաւարի:

Արեւմուտ տապանն, եղեւ արեւելք
եւ գերութեան վայրն դարձող գերելոց,
ի խաւարէ լոյս մեզ ճառագայթեաց:

Զգլուխ անկեան ըզվէմն չարգել կափարիլն,
եւ ոչ մատանին զանպարագրելին, լմին:
Բացան դրունք երկնից, բարձմամբ սուրբ վի-

եւ Ադամ եմուտ ի դրախտն աղենա.
Մի զինուոր վերին պակոյց ըզատորինս,

Փողէր սուրբ կանանցն զաւետիս կենաց:

Մի այլ արտասուէք զբարձողն արտասուաց
Յնծացէք յարեաւ անմահ կենդանին
Նշմա միայնոյ երգեսցուք ըզփառս:

Փ.— Լրւան զաւետեաց ծայն ուրախութեան,
Երթեալ պատմէին դասուցն ընտրելոց,
Ի Գալիլիա լերինն հետեւել:

Ընթացեալ տեսին եւ երկիր պագին,
Հրաման ընկալան զմեզ լուսաւորել,
Ընդ ձեզ եմ ասէր մինչ ի կատարած:

Ընդ որս երգեսցուք փառք յարուցելոյն:

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻՆ Է ՏԱՂՍ

Այսօր ընդ ծագելն արեւուն
Անմուտ ծագեաց մեզ արեգակն,

Այսօր խաւարն անգիտութեան
Հալածեցաւ յարարածոց:

Այսօր լցան գիրք մարգարէից
Ի կատարումն եկեալ բանիցն:

Այսօր յարեաւ տէրն ի մեռելոց,
Յարոյց զանկեալքս ի գլորմանէ:

Այսօր լուծան երկունք մահու,
Արձակեցան որք յաղամայ:

Այսօր իջեալ հրեշտակապետն
Տայր աւետիս խնկաբերիցն:

Փ.— Աստուածասէր եւ սուրբ կանայք
Զի՞ զկենդանին խնդրէք մեռեալ:

Մի՞ լայք անյոյս, այլ ցնծացէք,
Յարեաւ խալեալն անմահին միշտ:

Քարոզեցէք պետրեան գնդին,
Փութալ արագ առ բաղձալին:

Երգեմք եւ մեր ընդ հրեշտակին,
Յարուցելոյն փառք յաւիտեանս:

ՂՈՒԿԱՍՈՒ

Յրնծան այսօր երկինք եւ երկնային զօրք անմարմինք.
Յրնծա լոյս եղական քնդ անեղին լուսոյ ծագման.
Յրնծա լուսին ըստուերին, փայլմամբ լուսոյ անըստուերին.
Յրնծան պարք աստեղաց ընդ յարութիւն յօրինողին.
Յրնծա երկիր եւ ծով ի հնութենէ նորոգելով.
Յրնծան ծառք անտառի, ըստ ի սկզբանն զարդարին.
Յրնծան բոյսք ըզգալի, ի գարնանւոյս իմանալի.
Յրնծան կենդանականք ընդ անմահին կենդանութեան.
Յրնծան որդիք մարդկան բանգի յաղին դրախտն դարձան.
Յրնծա եկեղեցի զփեսայն տեսեալ յառազատի.
Յրնծայ նորով զատկիս, զենմամբ զառինն անարատի.
Յրնծան զգայարանքս, աւծեալք արեամբ պատարագին.